ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱԶԳԱՅԻՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ
ՏՆՕՐԵՆԻ ՏԵՂԱԿԱԼ

ք. Երևան, Նալբանդյան 104

«17» 02 2026թ. N 20/1/15

«ԷՍ ԵՎ ՋԻ ԳՌՈՒՊ» ՍՊԸ-ի տնօրեն՝
Ս. Թադևոսյանին,
ՀՎՀՀ 01360111
ՀՀ, ք. Երևան, Նազարբեկյան 13
էլ. հասցե՝ tadevos89@bk.ru

Հարգելի՛ պարոն Թադևոսյան,

ՀՀ ազգային անվտանգության ծառայության (այսուհետ՝ Գնորդ) և «ԷՍ ԵՎ ՋԻ ԳՌՈՒՊ» ՍՊԸ-ի (այսուհետ՝ Վաճառող) (ՀՎՀՀ 01360111, գործունեության հասցե՝ ք. Երևան, Նազարբեկյան 13) միջև 19.12.2025 թվականին կնքվել է «ՀՀ ԱԱԾ-ՏԱԼԿԿԳՎ-ԷԱՃԱՊՁԲ-25/1-ՀՄԴՀ-2» ծածկագրով պայմանագիրը (այսուհետ՝ Պայմանագիր), համաձայն որի՝ Վաճառողը ստանձնել է (N 2 չափաբաժնով՝ 10,923,162.06 (տասը միլիոն ինը հարյուր քսաներեք հազար հարյուր վաթսուներկու ամբողջ վեց) ՀՀ դրամ ընդհանուր գումարի 35 հատ դյուրակիր համակարգչի մատակարարման պարտավորությունը (այսուհետ՝ Ապրանք)՝ համաձայն Պայմանագրի անբաժանելի մասը կազմող N 1 հավելվածով սահմանված տեխնիկական բնութագրի և N 2 հավելվածով սահմանված մատակարարման ժամանակացույցի պահանջների:

Պայմանագրի 1.1 կետի համաձայն՝ Վաճառողը պարտավորվել է Պայմանագրով սահմանված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով Գնորդին մատակարարել Պայմանագրի N 1 հավելվածով սահմանված տեխնիկական բնութագրով նախատեսված ապրանքը՝ Պայմանագրի N 2 հավելվածով սահմանված մատակարարման ժամանակացույցին համապատասխան:

Պայմանագրի 2.4.1 կետի համաձայն՝ Վաճառողը պարտավորվել է Գնորդին հանձնել ապրանքը՝ պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով:

Պայմանագրի N 2 հավելվածով սահմանված մատակարարման ժամանակացույցի համաձայն՝ Ապրանքի մատակարարման ժամկետ է սահմանվել՝ 25.12.2025թ.,որի ընթացքում Վաճառողի կողմից չեն իրականացվել Պայմանագրով ստանձնած պարտավորությունները և չի մատակարարվել Պայմանագրի N2 չափաբաժնով նախատեսված 10,923,162.06 (տասը միլիոն ինը հարյուր քսաներեք հազար հարյուր վաթսուներկու ամբողջ վեց տասնորդական) ՀՀ դրամ արժողությամբ 35 հատ դյուրակիր համակարգիչը:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի (այսուհետ՝ Օրենսգիրք) 347-րդ հոդվածի համաձայն՝ պարտավորությունները պետք է կատարվեն պատշաճ՝ պարտավորության պայմաններին, օրենքին և այլ իրավական ակտերի պահանջներին համապատասխան: Օրենսգրքի 408-րդ հոդվածի համաձայն՝ Պարտավորության խախտում է համարվում այն չկատարելը կամ անպատշաճ (կետանցով, ապրանքների, աշխատանքների և ծառայությունների թերություններով կամ

պարտավորության բովանդակությամբ որոշվող այլ պայմանների խախտմամբ) կատարելը, իսկ Օրենսգրքի 409-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ պարտավորությունը խախտած պարտապանը պարտավոր է հատուցել պարտատիրոջը պատճառած վնասները:

Ելնելով վերոգրյալից և հիմք ընդունելով Պայմանագրի 2.1.7.1 կետի բ/ ենթակետը և 8.11 կետը՝ ՀՀ ազգային անվտանգության ծառայությունը միակողմանի լուծում է 19.12.2025 թվականին կնքված N «ՀՀ ԱԱԾ-ՏԱԼԿԿԳՎ-ԷԱՃԱՊՁԲ-25/1-ՀՄԴՀ-2» ծածկագրով պայմանագիրը:

«Գնումների մասին» օրենքի (այսուհետ՝ Օրենք) 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետի համաձայն՝ **մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե խախտել է պայմանագրով նախատեսված** կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, **որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը** կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը, և մասնակիցը հրավերով և (կամ) պայմանագրով սահմանված ժամկետում չի վճարել հայտի, պայմանագրի և (կամ) որակավորման ապահովման գումարը:

Օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ նույն հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով նախատեսված հիմքերն ի հայտ գալու դեպքում պատվիրատուի ղեկավարի պատճառաբանված որոշման հիման վրա լիազորված մարմինը մասնակցին ներառում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում:

Տեղեկացնում ենք, որ եթե ՀՀ ազգային անվտանգության ծառայությանը որոշումը ներկայացվելու վերջնաժամկետը լրանալու օրվա դրությամբ Դուք վճարեք պայմանագրի և (կամ) որակավորման ապահովման գումարը, ապա ՀՀ ազգային անվտանգության ծառայությունը Ձեզ գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու պատճառաբանված որոշում չի կայացնի և չի ներկայացնի լիազորված մարմին:

Բացի այդ, «ԷՍ ԵՎ ՋԻ ԳՌՈՒՊ» ՍՊԸ-ն պարտավոր է սույն ծանուցումը ստանալուց հետո 5 (հինգ) բանկային օրվա ընթացքում ՀՀ ֆինանսների նախարարության կողմից բացված գանձապետական 900005028106 հաշվեհամարին Պայմանագրի 6.2 և 6.3 կետերի համաձայն փոխանցել 60,077.39 (վաթսուն հազար յոթանասունյոթ ամբողջ երեսունինը) ՀՀ դրամ՝ որպես տույժ և տուգանք:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ Պայմանագրի որակավորման և պայմանագրի ապահովումները, գնումների մասին ՀՀ օրենսդրությամբ սահմանված ժամկետում, ամբողջությամբ վճարվելու դեպքում, այդ մասին անհրաժեշտ է գրավոր տեղեկացնել ՀՀ ազգային անվտանգության ծառայությանը՝ կցելով վճարումը հավաստող փաստաթուղթը (անդորրագրի բնօրինակը):

Տեղեկացնում ենք, որ եթե «ԷՍ ԵՎ ՋԻ ԳՌՈՒՊ» ՍՊ ընկերության (ՀՎՀՀ 01360111, գործունեության հասցե՝ ք. Երևան, Նազարբեկյան 13) կողմից վճարման ենթակա գումարները (պայմանագրի կատարման ապահովման գումարը՝ 1.092.359,97 (մեկ միլիոն իննսուներկու հազար երեք հարյուր հիսունինը ամբողջ իննսունյոթ) ՀՀ դրամ և որակավորման ապահովման գումարը՝ 1.638.539,96 (մեկ միլիոն վեց հարյուր երեսունութ հազար հինգ հարյուր երեսունինը ամբողջ իննսունվեց) ՀՀ դրամ փոխանցվեն ՀՀ ֆինանսների նախարարության կողմից բացված 900005000758 գանձապետական հաշվեհամարին, ապա Ընկերության նկատմամբ չեն կիրառվի «Գնումների մասին» օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով և նույն հոդվածի 2-րդ մասով նախատեսված՝ ընկերությանը գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցանկում ընդգրկելու վերաբերյալ համապատասխան գործողություններ:

Ա. Հակոբյան